ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Փամբակ համայնքի ավագանու թիվ 07 արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Փամբակ	Ավագանու արտահերթ նիստ	07.08.2024թ.	15:00	**Փամբակի** համայնքապետարան ավագանու նստավայր (գ. Փամբակ, 1 փող. 23)

ՕՐԱԿԱՐԳ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.08.2024Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ

«07» Օգոստոսի 2024թ. ժամը՝ 15.00

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի օգոստոսի 07-ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. Ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով սեփականության իրավունքով Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սերոբ Զուլալյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արթուր Բեկչյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Էդիկ Արշալույսի Մկրտչյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Փամբակ համայնքի Քարաբերդի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 07-Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի օգոստոսի 07-ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի օգոստոսի 07-ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
3. Ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով սեփականության իրավունքով Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սերոբ Զուլալյանին օտարելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արթուր Բեկչյանին օտարելու մասին:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Էդիկ Արշալույսի Մկրտչյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:
7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին:
8. Փամբակ համայնքի Քարաբերդի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Առաջատար մասնագետ 3.1- 2 Կ. Շերմազանյանը

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
«07» օգոստոսի 2024 թ-ի թիվ -Ա որոշման

2024 թվականի մայիսի 27 -ից մինչև օգոստոսի 5-ը ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

Հ/Հ	Հիմնական միջեցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Գինը /դրամ/	Գումարը /դրամ/
			Փաստացի (քանակը)	հաշվապահական տվյալներով (քանակը)		
1	Շերտավարագույր	2024	10.29 քմ	10.29 քմ	8200	84378
2	Շերտավարագույր	2024	11.7 քմ	11.7 քմ	7,500	87,750
3	Շերտավարագույր	2024	5.15 քմ	5.15 քմ	7,700	39670.4
4	Շերտավարագույր	2024	7.38 քմ	7.38 քմ	7,700	56787.5
5	Պահարան	2024	1	1	110,000	110,000
6	Գրասեղան	2024	2	2	70,000	140,000
7	Աղբամաններ	2024	65	65	100,000	6,500,000
8	Համակարգիչ i5,մայր սալիկ Asus Prim e B 760M-A D4-CSM,հովացման համակարգ,հիշող.սարք 16 GB,համակարգչի իրան,սնուցման բլոկ COUGAR STC 600,կոշտ սկավ. 1 TB,հիշող սարք LEXAR51 2 GB	2024	1	1	248,400	248,400
9	Մոնիտոր Philips 27 LCD 273V7 QDAB/01	2024	2	2	70,000	140,000

10	Անխափան սնուցման սարք MERCURI MAVERICK 1050	2024	8	8	29,000	232,000
11	Ստեղնաշար մկնիկով անլար Logitech MK330 blaq	2024	1	1	15,600	15,600
12	Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք CanonimageCLASS MF 3010	2024	1	1	106,000	106,000
	ԸՆԴԱՄԵՆԸ		34,52քմ 742068	34,52քմ 742068	771900	7579750

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Կ. ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՃԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐՏՅՈՄ ՌՈՒԴԻԿԻ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Արտյոմ Սաքանյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-010-6001-0004 ծածկագրով 0,11777 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասից 0,09 հա հողամասը՝ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Բաժնի պետ 2.1- 1 Ա. Օհանյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԵՐՈԲ ԶՈՒԼԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Սերոբ Զուլալյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Սերոբ Զուլալյանին վարձակալության իրավունքով պատկանող, Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0252-0004 կադաստրային ծածկագրով 0,7006 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1-ին կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով նրան օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 1045000 (մեկ միլիոն քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Բաժնի պետ 2.1- 1 Ա. Օհանյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐԹՈՒՐ ԲԵԿՉՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Արթուր Բեկչյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արթուր Բեկչյանին վարձակալության իրավունքով պատկանող, Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0252-0005 կադաստրային ծածկագրով 0,7202 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1-ին կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 1065000 (մեկ միլիոն վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Բաժնի պետ 2.1- 1 Ա. Օհանյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԷԴԻԿ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Էդիկ Արշալույսի Մկրտչյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Էդիկ Արշալույսի Մկրտչյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0238-0012 կադաստրային ծածկագրով 0.064 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով նրան օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 72200 (յոթանասուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Բաժնի պետ 2.1- 1 Ա. Օհանյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N Ա-

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0122-0117 ծածկագրով 1,201107 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 250000 / երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0394-0014 ծածկագրով 1,74670 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 2110000 /երկու մլն. մեկ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0395-0001 ծածկագրով 1,81144 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 2200000 /երկու մլն. երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0349-0068 ծածկագրով 0,73648 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 280000 /երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-019-0075-0003 ծածկագրով 0,075286 հա բնակավայրերի

նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 390000 /երեք հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0249-0007 ծածկագրով 0,08264 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
7) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0249-0008 ծածկագրով 0.14098 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
8) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0272-0005 ծածկագրով 0,07865 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 90000 /իննսուն հազար/ ՀՀ դրամ:
9) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0250-0027 ծածկագրով 0.412548 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 470000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:
10) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0250-0028 ծածկագրով 0.14990 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:
11) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0250-0029 ծածկագրով 0,10285 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:
12) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0251-0009ծածկագրով 0,12662 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
13) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0251-0010 ծածկագրով 0,65553 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 740000 /յոթ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
14) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0251-0011 ծածկագրով 0,13928 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

15) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0242-0009 ծածկագրով 0,101 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:
16) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0228-0012 ծածկագրով 0,28295 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 320000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:
17) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0228-0013 ծածկագրով 0,32142 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 365000 /երեք հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ:
18) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0244-0031 ծածկագրով 0,063747 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ:
19) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0244-0032 ծածկագրով 0,535471 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 610000 /վեց հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:
20) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0244-0026 ծածկագրով 0,1394 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
21) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի 06-102-0001-0082 ծածկագրով 0,00176 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ:
22) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0039-0010 ծածկագրով 0,05341 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ:
23) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Փամբակ բնակավայրի 06-107-0012-0010 ծածկագրով 0,10204 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար հազար/ ՀՀ դրամ:
24) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի 06-103-0039-0031 ծածկագրով 0,04396 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 65000 /վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ:
25) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Եղեգնուտ բնակավայրի 06-036-0012-0012 ծածկագրով 0,55336 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:
26) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0287-0001 ծածկագրով 0,65488 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 982000 /ինը հարյուր ութանասուներկու հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամասեր.
1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0232-0002 ծածկագրով 0,20179 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0232-0066 ծածկագրով 2,02845 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 28000 /քսանութ հազար/ ՀՀ դրամ:
3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0225-0001 ծածկագրով 0,15177 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:
4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0572 ծածկագրով 1,636959 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:
5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0240-0081 ծածկագրով 9,56953 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0203-0004 ծածկագրով 13,35851 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության

նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 65000 /վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ:
7) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0238-0018 ծածկագրով 2,53955 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:
8) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0313-0007 ծածկագրով 0,3489 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
9) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0031-0018 ծածկագրով 0,16239 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:
10) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի 06-059-0114-0009 ծածկագրով 0,174584 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:
11) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի 06-059-0114-0010 ծածկագրով 0,86356 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
12) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի 06-059-0114-0011 ծածկագրով 0,23084 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ:
13) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի 06-059-0114-0013 ծածկագրով 7,18166 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

4. Կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրվում է ընդհանուր օգտագործման հողամաս.
1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0740-0010 ծածկագրով 0.00394 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական

նշանակության հողամաս: Հողամասի տարեկան կառուցապատման վճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0734-0003 ծածկագրով 0.01171 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամաս: Հողամասի տարեկան կառուցապատման վճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Կառուցապատման մրցույթի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Առաջատար մասնագետ /քաղաքաշ/ 3.1-1 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԲԵՐԴԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով հաշվի առնելով «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ի 04.06.2024թ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով անցկացված հանրային լսումների արդյունքները, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ին, ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնակն տեղամասում պաշարների վերագնահատման համար օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը

ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի պաշարների վերագնահատման համար 2025–2027թթ. օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համառոտ նկարագիրը

Քարաբերդի հանքային դաշտը և հանքավայրը գտնվում են Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում, վարչական տեսակետից Լոռու մարզում՝ Վանաձոր քաղաքից 4.5 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևելք, Բազումի լեռնաշղթայի հարավային լանջին, Փամբակ գետի ձախ ափին։

Հանքավայրի ամենամոտ բնակավայրը դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Քարաբերդ գյուղն է, որի հետ այն հաղորդակցվում է 1.5 կմ երկարությամբ գրունտային ճանապարհով։ Վանաձոր-Ալավերդի մայրուղու և Վանաձոր երկաթուղային կայարանի հետ հանքավայրը կապված է համապատասխանաբար 9կմ և 11կմ երկարությամբ գրունտային (9կմ) և ասֆալտապատ (2կմ) ճանապարհներով։

Աշխարհագրական տեսակետից հանքավայրի տարածքը բնութագրվում է տիպիկ բարձր լեռնային, խիստ կտրտված ռելիեֆով, որտեղ առկա են խոր ձորեր և խոշոր բարձրացումներ՝ լեռնաշղթաների և առանձին գագաթների տեսքով։ Տարածքի բարձր գագաթներն են՝ Շեկգելը (2401.5 մ), Հալաբը (3016 մ) և Քոշաքարը (2812 մ) Բազումի լեռնաշղթայում։

«Մասիս Փլանթ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է 2025–2027թթ. Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարում՝ հորատանցքերի հորատման և նմուշարկման միջոցով, ինչպես նաև լաբորատոր պայմաններում հանքանյութերի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրում։



«Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը նախատեսում է մոտ 25.0 հա զբաղեցնող տեղամասում իրականացնել .

- ✓ հորատանցքերի հորատում,
- ✓ հորտանցքերի նմուշարկում,
- ✓ տոպո-մարկշեյդերական աշխատանքներ,
- ✓ լաբորատոր պայմաններում հանքանյութերի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրում,
- ✓ հանքավայրի երկրաբանատնտեսագիտական վերագնահատում,
- ✓ պաշարների վերահաշվարկում արդյունաբերական կարգերով:

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար պարոն Ս. Կոստանդյանին «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունից Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 10/21	To: Mr. S. Kostandyan, Head of Pambak community RA Lori region From: MASIS PLANT LLC Address: 10/21 Admiral Isakov Ave., Yerevan, RA
Հարգելի պարոն Կոստանդյան,	Dear Mr. Kostandyan,
Հայտնում եմ Ձեզ, որ «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում իրականացնել հետևյալ գործունեությունը. – ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում պաշարների վերագնահատման համար օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:	Please be informed that MASIS PLANT LLC plans to implement the following activitie in Pambak community of the RA Lori region: – Exploration works for mineral mining with the aim of revaluation of the reserves of Central Area of Karaberd gold deposit of the RA Lori region.
Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով՝ խնդրում եմ վերը նշված նախատեսվող գործունեությանը նախնական համաձայնություն տալու հարցը քննարկել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու նիստում և տրամադրել կայացվելիք որոշման օրինակը:	Being guided by the requirements of Article 16 of the RA Law on Environmental Impact Assessment and Expertise, I apply to you with a request to discuss the issue of giving a prior consent to the aforementioned planned activitie during a sitting of Pambak community's Council of Elders and to provide a copy of the decision to be adopted.
Կից ներկայացվում է նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը:	Please find attached brief description of the planned activitie.

Հարգանքով՝ / Best regards,
Տնօրեն / Director
Մ. Հարությունյան / M. Harutyunyan

04.06.2024